պայմանով, համաձայն նորա եւ Հուզայփայ Ի. Եամանի մէջ 22 Թ. տեղի ունեցած դաշնագրութեանն։ Երբ Աբդուլլահ Ի. Զուբայր իւր աւարառութիւնից անվնաս վերադարձաւ, Վալիդ ուղարկեց 24 Թ. Սալման Ի. Ռաբիայ Բահլիին 12.000 զօրքով Հայք, որ կողոպտեց, սպանեց, գերեց եւ վերադարձաւ աւարով Վալիդի մօտ։

## Տաբարի:

24 Թ. Օսման հրամայեց Մուավիային՝ ուղարկել Հաբիբ Ի. Մասլամային Ասորիքի ժողովրդի հետ Հայաստան. Մուավիայ կատարեց նորա հրամանն։ Հաբիբ՝ լուր առնելով, որ յոյն Մավրիանը 80.000 յոյն եւ թուրք զօրքով նորա դէմ է գալիս, գրեց այս բանի մասին Մուավիային, սա տեղեկացրեց Օսմանին, իսկ Օսման գրեց Սայիդ Ի. Ալասին, հրամայելով նորան օգնել Հաբիբ Ի. Մասլամային. Սայիդ ուղարկեց Սալման Ի. Ռաբիային 6000 մարդ։

31 Թ. Հաբիբ Ի. Մասլամայ Փիհրի նուաճեց Հայաստան՝ ըստ Վակիդիի աւանդութեան։

32 Թ. Սայիդ Ի. Ալաս նշանակեց Սալման Ի. Ռաբիային Բալանջարի սահմանագլխի վերայ, տալով նորան օգնակից գունդ Հուզայփայի առաջնորդութեամբ եւ մի այլ գունդ Ասորիքի ժողովրդից բաղկացած՝ Հաբիբ Ի. Մասլամայ Փիհրիի հրամանատարութեան ներքոյ։

Օսման գրեց Սայիդին՝ ուղարկել Սալմանին Բաբ (Դարբանդ), իսկ Աբդուլռահման Ի. Ռաբիային (որ Բաբի հանդէպ կը գտանուէր) հրամայեց այնտեղից հեռանալ. սակայն նա չհեռացաւ Բալանջարից, այլ Օսմանի ամիրապետութեան Թ. թւին եկաւ պաշարեց Բալանջար, քաղաքի առջեւ դնելով մանջանիք եւ արրադաա (քարանետ) մեքենաները, այնպէս որ ոչ ոք չէր կարող մօտենալ առանց վնասուելու կամ սպանուելու։ Թուրքերի